Հավելված

ՀՀ առաջին փոխվարչապետի
2018 թ. օգոստոսի 31 -ի N 110 – Ա
որոշման

«Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիր ՊՈԱԿ-ի արհեստագործական մասնաշենքի հիմնանորոգում»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է հիմնանորոգել Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիր ՊՈԱԿ-ի արհեստագործական մասնաշենքը, որի արդյունքում հնարավորություն կստեղծվի կրթահամալիրում սովորող 250 սաների համար հարմարավետ պայմաններում կազմակերպել ութ մասնագիտություններով արհեստների ուսուցում: Հաջորդ փուլով նախատեսվում է նաև վերջինս հագեցնել արհեստների ուսուցում կազմակերպելու համար անհրաժեշտ սարքավորումներով, կահույքով ու ուսուցման նյութերով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված):
3.	Բարեգործը	Հայ Օգնության Ֆոնդ
4.	Ծրագիրը կատարողը	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան 0010, Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ք. Երևան, Ռաֆֆու փողոց, թիվ 113 շենք: Բնագավառը՝ կրթական:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 352,538.11 (երեք հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր երեսունութ ԱՄՆ-ի դոլար տասնմեկ ցենտ) ԱՄՆ-ի դոլարին համարժեք ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիր ՊՈԱԿ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Սկիզբ՝ հուլիսի 2, 2018 թ. Ավարտ՝ մայիսի 31, 2019 թ.

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել կրթահամալիրի արհեստագործական մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքները: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 352,538.11 ԱՄՆ-ի դոլարին համարժեք ՀՀ դրամ: Աշխատանքների իրականացման ժամկետն է՝ հուլիսի 2, 2018 թ. - մայիսի 31, 2019 թ: Իրականացվելիք շին-վերանորոգման աշխատանքների մանրամասն ծավալներն ներկայացված են պայմանագրին կից հավելվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 352,538.11 (երեք հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր երեսունութ ԱՄՆ-ի դոլար տասնմեկ ցենտ) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով, պայմանագիր կնքված 02.07.2018թ. Հայ օգնության ֆոնդի (ՀՀ, ք. Երևան 0010, Խորեացի 22, ՀՎՀՀ 02517115) և «Կանակա» ԲԲԸ (ՀՀ, ք. Վանաձոր 2022, Նժդեհի փողոց, 4, ՀՎՀՀ 06901369) միջև:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագիրը չի նախատեսում կազմակերպական ծախսեր:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցելու է ՀՀ կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերը համակարգող հանձնաժողովի և կրթության նախարարության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի և Երևանի գրասենյակների, ՀՀ կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերը համակարգող հանձնաժողովի կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ